



49. ԱՍՏՎԱԾ ԸՆՈՂԱՑՆ Ա ՊԱՐՏԱԿԱՆ

Չորանը նաև աստված ըխապըրանում ըն, միշտ ուրեմն տռն քյինալ-կյալ ա ինում, ուրեմն զան ըն ասում, զան ըսկանում:

Ամըեռնը կյամ ա, աշխարքը իլլում-լըսնըվում ա: Խուտահարքը ըսկըսվում ա, չորանը վրել մին պենու հոքսը չի քաշում: Հըրվըննեն հըրցնում ըն, ասում.—Չորան ախապըեր, խել լը՝ հիյմըններետ հոքսը վախտըեն քաշում, միշտ իստի ամմըեռնը չի ըննական, խոտ պիտի ինի, վրեր օմըեռնը հիյմըննետ օտըեն: Չորանն էլ ասում ա.—Աստված իմ ախապըեր ինիյավ խե՛ պիտի գարդ անըեմ:

Խուտահարքը հընցնում ա, չորանը հալա մին կըոքըպըտըռն խոտ պիրիլու Արաբերը հնձըն ըն, կալերը թակում, տերմանն ածում մըրըքյննեն: Չորանը վրել մին պեն անում չի, Հըրվըննեն ասում ըն.—Չորան ախապըեր, էն տերմանը խել լը՝ ածում մարաքյըտ, խել լը՝ հիյմըններետ հոքսը քաշում: Չորանն էլ ասում ա.—Աստված իմ ախապըեր ինիլավ ծո՛ն չի կյիլական, հիյմըննես կըտորեն:

Ամըեռնը կյամ ա հընցնում, մտըն սարերը ծո՛ն ա կյամ: Մմըեռնը յըվըշ-յավաշ մուտանում ա: Մին օր էլ չորանը քշերավ քումըտեղա եր ա կենում, տեհսնում ծո՛նը եկալ ա, ուրան տռանը չոքալ, հիյմըննեն էլ սուվլըծթուման կըտորվում ըն: Չորանը եր ա կենում, քյինամ ուրան ախապըեր ըստուծըեն կոշտը, Աստված տըեսնում ա, վրեր չորանը շատ ս բեթյեփ, ասում ա.—Հը, չո՛քան

ախաղընը, դարդըտ հինչ ա՞։ Չորանն ասում ա։—Պա մունք հերհեր
ախաղընը ինիլավ հոնց ը՞ս ծհնն կյամ, հիլվըննես կըտորում, էտ
դժնղոթուն տըհոա՞վ։ Աստված էլ ասում ա։—Ես քեզ վախտըն գու-
յուղ ըմ ըրալ, էն վրեր ախշարբըս իլլալ ա լըշվալ, տու էն
վըխտեն հիշտեղ ը՞ս իլլալ, էն վրեր սարերը ծհնն ա եկալ, տու
հինչ ըս իլլա՞լ ընելիս, տու քու հոքսըտ քաշալ լրս, ուզբեցալ ըս
ծիրհիշն իմադյավ ապրընս, մեհենգլ ես մեղավրեր ը՞մ, աստված
ընողացն ա պարտական։

